առեալ կատարեցիք առանց ի միաս բերելոյ զնեղութիւնն՝ որում բաժանորդ գտայք, զհարուածս ասեմ երկրաշարժութեան և զանազան ձախորդութեանց, ինքնին փառաւորէ զձեզ յաւելեալ պարծանս ի վերայ պարծանաց, ոչ վասն այնորիկ միայն զի զչքնաղ յիշատակ Աստուածասէրս լինելոյ նախնի Հարց ձերոց կանգնեցիք ի կործանմանէն, այլ և զի և դուք ցուցիք աշխարհի եթէ որդիք հայրանման էք և առաւելեալ քան զնոսա Աստուածսիրութեամբ և ջերմեռանդութեամբ ի պաշտօն Աստուծոյ։

Այդ գործ պանծալի կանգնեալ ի ձերոց աշխատութեանց, յորում փայլի հանդէս առաքինութեան ձերոյ արդարեւ խնդութիւն մեծ յաւել ի մեզ և բերկրեցաք հոգւով և մտօք իբրեւ հայր որ ընդ փառս և ընդ արիական գործս որդւոց խայտայ հրճուանօք, վասն որոյ օրհնեցաք զՏէր որ զսիրելի որդեակսդ մեր ըստ հոգւոյ ի ժամանակիս յորում աշխարհասէրք են բազումք, զձեզ իւրով անքննելի կամօք և նախախնամեալ հովանաւորութեամբ պահէ յօրէնսն իւր սուրբս և անարատս և շարժէ ի բարին, որ մեծն է քան զամենայն բարիս աշխարհի ըստ նպատակին և ըստ վախճանին, զի որ ինչ վերաբերի յԱստուած և գործի ի փառաւորութիւն Աստուծոյ, մեծ է քան զամենայն ըստ առաւելութեան արդեանց։

Եւ արդ յայդ գործ ձեր առաքինահանդէս օրհնեմք նախապէս զաշխատաւորս նորին, որ ի վերայ անձնական ծանրութեանց՝ ստանձնեալ յօժարութեամբ զծանրութիւն բեռինդ՝ ածին ի կատարելութիւն ժիր և գործունեայ աշխատութեամբ պսակեալ համբերութեամբ։ Օրհնեմք և զայնոսիկ, որ ինքնայօժարութեամբ բարեպաշտեալ յանձին՝ նպաստաւորս գտան ի գործ շինութեանդ նուիրելով առատութեամբ զբարեպաշտական տուրս ողորմութեան ի սատարումն շինութեան՝ որ Աստուծոյն էր, և տեղի և տաճար Բարձրելոյն՝ որ ընդ ամենայն տեղիս գոլով հաճեալ է մարդասիրաբար յատկապէս տաղաւարել ի նմին աներեւոյթապէս առ ի լսել զաղօթս և ընդունել զհայցուածս սրտից պաշտողաց իւրոց։

Օրհնեմք և զլրութիւն քաղաքիդ զհաւատարիմ լուսածին որդիս երկանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, որ ըստ աւանդութեան Սրբազան Առաքելոցն Քրիստոսի գնան ճշմարտութեամբ ի